

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1.1. Սույն հրապարակային պայմանագրում (այսուհետ՝ **Պայմանագիր**) և դրա շրջանակներում Կողմերի միջև կազմվող այլ փաստաթղթերում մեծատառով կիրառվող եզրույթներն ունեն Շնչառության՝ Համակարգից օգտվելու Կանոններով (այսուհետ՝ **Կանոններ**) սահմանված իմաստը: Կանոնները հանդիսանում են հրապարակային փաստաթուղթ և տեղադրված են Շնչառությանը պատկանող www.idram.am հարթակում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Մասնակիցը միանում է Համակարգին, ընդունում Կանոններն ու Պայմանները և օգտագործման իրավունքով Շնչառությանը տրամադրում իր Հետևորդներին վերաբերող տվյալների բազան, այդ թվում՝ առևտրային տեղեկատվությունը, իսկ Շնչառությունը իրականացնում է Գործարքներին առնչվող հաշվարկներ, պատրաստում վճարման հանձնարարականներ Կանոնների 4.1 և 4.2 կետերով սահմանված փոխանցումների իրականացման համար, ինչպես նաև Կանոնների 4.4 և 4.5 կետերով սահմանված կարգով վճարահաշվարկային ծառայություններ է մատուցում Մասնակցին:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Մասնակիցը պարտավոր է՝

- 3.1.1. Համակարգում մուտքագրել ճշգրիտ տեղեկություններ,
- 3.1.2. ունենալ հաշվառման հաշիվ Շնչառության Իդրամ համակարգում,

3.2. Մասնակիցը իրավունք ունի՝

- 3.2.1. խմբագրել Համակարգում իր կողմից մուտքագրված տեղեկությունները,
- 3.2.2. Համակարգ հրավիրել այլ անձանց, ձևավորել իր Հետևորդների թիմը,
- 3.2.3. առաջարկել իր նախընտրած վաճառքի կետը, որտեղից նա ցանկանում է ստանալ զեղչ,
- 3.2.4. պատվիրել այլ անձանց Համակարգ հրավիրելու համար նախատեսված պլաստիկ քարտեր՝ վճարի դիմաց:

3.3. Շնչառությունը պարտավոր է՝

- 3.3.1. ապահովել Մասնակցի՝ Համակարգ մուտք գործելու մուտքանունը և գաղտնաբառը,
- 3.3.2. ապահովել Մասնակցի մուտքը Համակարգ և Համակարգի միջոցով Գործարքների իրականացումը,

3.4. Շնչառությունն իրավունք ունի՝

- 3.4.1. իրականացնել Համակարգի ընթացիկ կառավարումը, որոշել դրա կառուցվածքը, արտաքին տեսքը,
- 3.4.2. թույլատրել կամ սահմանափակել Մասնակցի մուտքը Համակարգ՝ Պայմաններով սահմանված կարգով,
- 3.4.3. օգտագործել Գործարքի, Մասնակցի և վերջինիս Հետևորդների վերաբերյալ տվյալները՝ Պայմաններով սահմանված կարգով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Համակարգում Մասնակցի գրանցման պահից և գործում է Համակարգից օգտվելու ողջ ժամանակահատվածում:
- 4.2. Շնչառությունն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Պայմանագիրը՝ Կայքէջում Պայմանագրի փոփոխված տարբերակը տեղադրելու և դրա մասին Մասնակցին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:
- 4.3. Փոփոխված Պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն հաստատելու վերաբերյալ Շնչառության համապատասխան ակտով սահմանված ժամկետում, սակայն ոչ շուտ քան Կայքէջում տեղադրվելու պահից 10 օր լրանալը:
- 4.4. Պայմանագրով սահմանված դրույթների հետ համաձայն չլինելու դեպքում Մասնակիցը իրավունք ունի միակողմանիորեն կասեցնելու Համակարգին իր անդամակցությունը:

ԿԱՆՈՆՆԵՐ

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- 1.1. Սույն կանոններում մեծատառով կիրառվող հետևյալ եզրույթներն ունեն սույն կետով սահմանված իմաստը, եթե այլ բան սահմանված չէ Ընկերության կողմից հաստատված պայմաններով.
- **Համակարգ**՝ Ընկերությանը պատկանող հարթակ (www.idram.am), որտեղ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք ներկայացնում են իրենց կողմից վաճառվող ապրանքները և (կամ) ծառայությունները:
 - **Մասնակից**՝ Համակարգում գրանցված և համապատասխան անհատականացնող տվյալներ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ:
 - **Հետևորդ**՝ Մասնակցի՝ մինչև վեցերորդ մակարդակ Համակարգում գրանցված բոլոր անձիք, որոնցից անմիջապես Մասնակցի թիմում գրանցված անձիք հանդիսանում են Մասնակցի առաջին մակարդակի Հետևորդներ, վերջիններիս թիմում գրանցված անձիք հանդիսանում են Մասնակցի երկրորդ մակարդակի Հետևորդներ, և այդպես մինչև վեցերորդ մակարդակ:
 - **Ներկայացուցիչ**՝ Մասնակցի կողմից Համակարգի միջոցով լիազորված (մատնանշված) կամ որպես Մասնակցի ներկայացուցիչ Ընկերության կողմից նշանակված անձ:
 - **Գործընկեր**՝ Համակարգում գրանցված և առևտրային գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ:
 - **Գործարք**՝ Համակարգի միջոցով Գործընկերոջ ապրանքները, ծառայությունները կամ աշխատանքները Մասնակցին իրացնելու պայմանագիր կամ Համակարգի էությանը համապատասխանող այլ գործարք:
 - **Օգտատեր**՝ Մասնակից, Հետևորդ և (կամ) Գործընկեր:
 - **Ընկերություն**՝ «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:
 - **Կայքէջ**՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող www.idram.am կայքէջ:
 - **Կանոններ**՝ Համակարգից օգտվելու և Ընկերության կողմից հաստատված կանոններ, որը հրապարակային փաստաթուղթ է և տեղադրված է Կայքէջում:
 - **Պայմաններ**՝ Համակարգից օգտվելու և Ընկերության կողմից առանձին փաստաթղթի ձևով հաստատված պայմաններ, որը հրապարակային փաստաթուղթ է և տեղադրված է Կայքէջում:
 - **Պայմանագիր**՝ Ընկերության ու Օգտատերերի միջև կնքված՝ Համակարգի գործունեությանը վերաբերող կամ այն պայմանավորող համաձայնագիր և (կամ) պայմանագիր:
 - **Քեշբեք**՝ Մասնակցի կողմից Գործընկերոջը վճարված կանխավճարի չօգտագործված մասի չափով Մասնակցին հետ վերադարձվող գումար:
 - **Հատուցում**՝ Մասնակցի Հետևորդներին վերաբերող առևտրային տեղեկատվությունը (այդ թվում՝ տվյալների բազան) օգտագործելու համար Ընկերության կողմից Մասնակցին տրվող վարձատրություն:

2. ՏԿՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ

- 2.1. Կայքէջի համապատասխան բաժիններում ու վայրերում Օգտատիրոջ կողմից մուտքագրվում են իրեն վերաբերող տվյալներ, տեղեկություններ և այլ նյութեր՝ Կայքէջից օգտվողների համար դրանց հասանելությունը և Համակարգի գործունեությունը ապահովելու նպատակով:
- 2.2. Գործընկերը Գործարք իրականացնելիս, նույն պահին Գործարքի տվյալները մուտքագրում է Համակարգ՝ հեռախոսի կամ համակարգչի միջոցով, կամ Մասնակցին տրամադրում է ստորագրված և կնքված հավաստագիր, որն իր մեջ ներառում է Գործընկերոջ անվանումը, պատասխանատու անձի անուն, ազգանունը (անհրաժեշտության դեպքում), Մասնակցի նույնականացման համարը, Գործարքի ամսաթիվը, ապրանքի կամ ծառայության արժեքը և կիրառելի գեղչը՝ տոկոսի կամ գումարի տեսքով:
- 2.3. Եթե որևէ տեխնիկական պատճառով Գործընկերը չի կարողանում Համակարգում մուտքագրել վերը նշված տվյալները, ապա նա Ընկերության՝ իր գործունեությունը Համակարգում կորոդինացնող Ներկայացուցչին հնարավորություն է տալիս (Գործընկերոջ էջում մուտք ունենալու համար անհրաժեշտ գաղտնաբառեր և այլն) իր փոխարեն մուտքագրելու նշված տվյալները:

3. ԶԵՂԶԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԿԱՐԳ

- 3.1. Համակարգում Գործընկերը հայտարարում է գեղչ, որը նա պարտավորվում է կիրառել Գործարքի ժամանակ:
- 3.2. Գործընկերն իր հայեցողությամբ կարող է գեղչ տրամադրել նաև Մասնակցի չհանդիսացող այլ հաճախորդներին և ընդունել գեղչի գումարը՝ որպես կանխավճար, որը տվյալ հաճախորդները կարող են օգտագործել միայն Համակարգում գրանցվելուց հետո:
- 3.3. Գործընկերը կարող է 1 (մեկ) օրում առավելագույնը 1 (մեկ) անգամ փոփոխել գեղչի տոկոսը: Փոփոխված (ամենավերջին մուտքագրված) գեղչի տոկոսը և դրա հետ կապված հաշվարկները սկսում են կիրառվել փոփոխմանը հաջորդող աշխատանքային օրվա 00:00 ժամից:
- 3.4. Գործընկերը կարող է սահմանել հետևյալ գեղչերը՝
- Հիմնական՝ գեղչ, որը գործում է բոլոր ապրանքների կամ ծառայությունների վրա,
 - Առանձին՝ գեղչ, որը գործում է կոնկրետ ապրանքի կամ ծառայության համար,
 - Հատուկ՝ գեղչ, որը գործում է հատուկ առաջարկի տեսքով,
 - Ժամկետային (hot deal)՝ գեղչ, որը գործում է որոշակի ժամանակահատվածում:

- 3.5. Որևէ ապրանքի կամ ծառայության համար 0 (զրո) տոկոս զեղչ սահմանելու դեպքում, տվյալ ապրանքը կամ ծառայությունը ինքնաշխատ կերպով դուրս է գալիս որոնման համակարգից:
- 3.6. Հիմնական զեղչը 0 (զրո) տոկոս նշելու դեպքում որոնման համակարգից ամբողջությամբ դուրս է գալիս տվյալ Գործընկերը և չի երևում Կայքէջի այցելուներին: Նվազագույնից ցածր զեղչի տոկոս սահմանելու դեպքում Համակարգն այն դարձնում է 0 (զրո):
- 3.7. Այն դեպքերում, երբ հնարավոր է ապրանքի կամ ծառայության ամրագրում, Գործընկերը պարտավորվում է ապրանքը կամ ծառայությունը տրամադրել ամրագրման պահին գործող զեղչի տոկոսով, բացառությամբ այն դեպքերի, երբ գնման պահին գործող զեղչի տոկոսը գերազանցում է ամրագրման պահին հայտարարված զեղչի տոկոսին, որի դեպքում կիրառվում է հայտարարված զեղչի տոկոսներից առավելագույնը:

4. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

- 4.1. Գործարք իրականացնելիս Մասնակիցը կանխիկ կամ անկանխիկ եղանակով, այդ թվում՝ Համակարգին գործակցված իր հաշվից, վճարում է Գործարքի արժեքն ամբողջությամբ՝ ներառյալ զեղչի գումարը, որը Գործընկերոջ մոտ ձևակերպվում է որպես Մասնակցից ստացված կանխավճար և կարող է Մասնակցի կողմից օգտագործվել Գործընկերոջ մոտ այլ Գործարքներ իրականացնելիս:
- 4.2. Մասնակցի Քեշբեքը կազմում է Գործընկերոջը վճարված կանխավճարի 100 (մեկ հարյուր) տոկոսը, որի չօգտագործված մասը Քեշբեքի հաշվարկմանը հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Գործընկերոջ կողմից փոխանցվում է Մասնակցին:
- 4.3. Հատուցման գումարը կազմում է Ընկերության և Գործընկերոջ հետ կնքված առանձին պայմանագրով որպես Մասնակցին Գործընկերոջ կողմից մատուցված վճարահաշվարկային ծառայության Ընկերության կողմից ստացված միջնորդավճարի 18 (տասնութ) տոկոսը՝ առանց հարկերի, որը հավասարաչափ բաշխվում է Համակարգում Գործարք իրականացնողից առավելագույնը 6 (վեց) մակարդակ վերև գտնվող այն Մասնակիցների միջև, որոնց համար Գործարք իրականացնողը հանդիսանում է Հետևորդ:
- 4.4. Մասնակցին Վճարման ենթակա Հատուցման գումարը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամը գերազանցելու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում է վերջինիս՝ Ընկերության կողմից կիրառելի հարկերը պահելուց հետո:
- 4.5. Քեշբեքը և Հատուցման գումարը հաշվարկվում են Համակարգի միջոցով ինքնաշխատ, և դրանց հետ կապված փոխանցումներն իրականացվում են Համակարգին գործակցված հաշիվների միջև՝ փոխանցվող գումարները հավելորդով կամ պակասորդով կլորացվելով մինչև միավորների կարգը՝ Ընկերության հետ համագործակցող ֆինանսական կազմակերպության կանոններին համապատասխան:
- 4.6. Քեշբեքի կամ Հատուցման գումարը փոխանցվում է Մասնակցի Ներկայացուցչին, եթե Մասնակիցը չունի Համակարգին գործակցված հաշիվ, կամ եթե տվյալ գումարը Մասնակցին փոխանցելու դեպքում Մասնակցի հաշվի մնացորդը կգերազանցի է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած թույլատրելի չափը:
- 4.7. Ներկայացուցչին փոխանցված Մասնակցի Քեշբեքի կամ Հատուցման գումարը Ներկայացուցչի կողմից փոխանցվում է տվյալ Մասնակցին՝ վերջինիս կողմից Իդրամ համակարգի հաշվառման հաշիվ տրամադրելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 5.1. Կանոնները հաստատված են Ընկերության կողմից:
- 5.2. Կանոնների փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանք հաստատելու վերաբերյալ Ընկերության համապատասխան ակտով սահմանված ժամկետում, սակայն ոչ շուտ, քան դրանք Կայքէջում հրապարակելու պահից 10 (տաս) օր լրանալը:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 5.3. Պայմանները հաստատված են Ընկերության կողմից:
- 5.4. Պայմաններում մեծատառով կիրառվող եզրույթներն ունեն Կանոններով սահմանված իմաստը:

6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 6.1. Կայքէջում հրապարակման ենթակա տեղեկությունների ընտրությունը կատարում է Օգտատերը՝ սեփական հայեցողությամբ, և Ընկերությունը չի կրում նշված տեղեկությունները վերահսկելու պարտականություն:
- 6.2. Գործընկերոջ կողմից Համակարգում տեղադրված առաջարկները, տեղեկությունները և այլ կայքերին հղումները կրում են առավելապես գովազդային բնույթ և Ընկերության կողմից հրապարակվում են Կայքէջում, որպեսզի հասանելի լինեն Կայքէջից օգտվողների համար, որը չի ենթադրում, որ դրանց բովանդակությունը Ընկերության կողմից հավանության է արժանացել:
- 6.3. Ընկերությունը կարող է սահմանափակել կամ չընտրել անցանկալի տեղեկատվության հայտնվելը Կայքէջում, վերլուծել ու հեռացնել Կայքէջում տեղակայված կեղծ, վիրավորական բնույթի ու այլ անընդունելի տեղեկատվությունը, ինչպես նաև Կայքէջի սխալ բաժիններում ու վայրերում տեղադրված տեղեկատվությունը, և ձեռնարկել տեխնիկական ու իրավական ցանկացած միջոցներ, որպեսզի արգելի տվյալ տեղեկությունները հրապարակող Օգտատիրոջ մուտքը Կայքէջ:

7. ԲՈՎԱՆՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ (CONTENT)

- 7.1. Բովանդակությունը կարող է ներառել հեղինակային իրավունքի օբյեկտ, ապրանքային նշան կամ այլ գույքային և ոչ գույքային իրավունքի օբյեկտ:
- 7.2. Օգտատերը ներկայացնում և երաշխավորում է, որ իր կողմից բովանդակության տրամադրումը Ընկերությանը կամ տեղադրումը Կայքէջում, ինչպես նաև Ընկերության կողմից դրա օգտագործումը չի հանդիսանում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների խախտում:
- 7.3. Օրենսդրության թույլատրելիության սահմաններում Օգտատերը հրաժարվում է բովանդակության նկատմամբ իր անձնական ոչ գույքային իրավունքներից և հավաստում, որ Ընկերությանը կամ Ընկերության իրավահաջորդներին և ներկայացուցիչներին պատասխանատվության չի ենթարկի:

8. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

- 8.1. Կայքէջում տեղադրելով անձնական տվյալներ կամ դրանք տրամադրելով Ընկերությանը, այլ Մասնակցին կամ Ներկայացուցչին՝ Մասնակիցը վերջիններիս տալիս է իրավունք օգտագործելու իր անձնական տվյալները, այն է՝ անկախ իրականացման ձևից և եղանակից, կատարել ցանկացած գործողություն կամ մի շարք գործողությունների հանրագումար, որոնք կապված են իր անձնական տվյալները հավաքելու, մշակելու, մուտքագրելու, գրանցելու, կուտակելու, ամրագրելու, համակարգելու, կազմակերպելու, պահպանելու, օգտագործելու, հարմարեցնելու, փոփոխելու, ուղղելու, ուղեփակելու, թարմացնելու, վերամշակելու, վերափոխելու, վերականգնելու, բաշխելու (վաճառք, փոխանցում), ոչնչացնելու, Կայքէջից հեռացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ:
- 8.2. Մասնակցի անձնական տվյալներ են հանդիսանում՝
 - ստանդարտ տվյալներ, որոնք ավտոմատ կերպով ընդունվում են HTTP սերվեր՝ Կայքէջ մուտք գործելիս (հոսթի IP հասցեն, հարցվող ռեսուրսի հասցեն, դիտված ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն, ժամանակը և տեսակը, Մասնակցի օպերացիոն համակարգի տեսակը, էջի հասցեն, որից անցում է կատարվել այլ հայցվող ռեսուրսի),
 - Մասնակիցների կողմից տրամադրված տվյալները, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալ տվյալներով՝ փոստային հասցեներ (մուտք գործելու անուններ), գաղտնաբառեր, անուններ, կոնտակտային տվյալներ,
 - այլ տեղեկություններ, մասնավորապես՝ Կայքէջերի դիտման վիճակագրությունը, ստացված և փոխանցված տեղեկությունների ծավալը և այլն, որոնք ձեռք են բերվում կամ ձևավորվում են Կայքէջ մուտք գործելիս՝ օգտվելով մի շարք գործիքներից, այդ թվում՝ նշոցիկներից (cookies):
- 8.3. Մասնակիցները կարող են այնպես կարգավորել իրենց համակարգչի զննարկիչը, որ այն չընդունի նշոցիկներ, սակայն դա կարող է բացասական ազդեցություն ունենալ Կայքէջի հետագա դիտման համար:
- 8.4. Ընկերությունն իրավունք ունի դիմել երրորդ անձանց օգնությանը, որպեսզի փոքրիկ տեքստային ֆայլերի (նշոցիկ/cookies) օգնությամբ տեղեկություններ հավաքագրի Մասնակիցների մասին՝ Կայքէջի և նրա ծառայությունների բարելավման նպատակով:
- 8.5. Ընկերությունը Մասնակիցների անձնական տվյալներն օգտագործում է հետևյալ նպատակների համար՝
 - աջակցելու Կայքէջի գործունեությանը,
 - ապահովելու գովազդային, առևտրային և այլ տեղեկատվական նյութերի հասանելիությունը,
 - հաշվարկելու Քեշբեքի և Հատուցման գումարները,
 - պատրաստելու վճարման հանձնարարականներ,
 - որոնելու և վերլուծելու հնարավոր սխալների և անսարքությունների պատճառները,
 - բացահայտելու և վերլուծելու Մասնակիցների նախապատվությունները և պահանջները,

- տեղեկացնելու ծառայությունների, նորությունների, մարքեթինգային և այլ առաջարկությունների մասին,
 - լուծելու հնարավոր վեճերը և տարաձայնությունները,
 - կատարելու Մասնակիցների կողմից Կայքէջի հաճախելիության և նախասիրությունների վերլուծություն,
 - իրականացնելու այլ գործողություններ, որոնք կապված են Կայքէջի գործունեության բարելավման հետ:
- 8.6. Մասնակցի անձնական տվյալները կարող են նաև հասանելի լինել՝
- անձանց, որոնց իրավունքները և պարտականությունները տվյալ տեղեկությունները ստանալու համար սահմանվում են ՀՀ իրավական ակտերով, Պայմանագրով, Կանոններով և Պայմաններով,
 - անձանց, որոնք իրականացնում են Կայքէջի ծառայությունների ապահովում, այն չափով, որն անհրաժեշտ է նման ապահովման համար:
- 8.7. Մասնակիցը կարող է ցանկացած ժամանակ փոփոխել (թարմացնել, ավելացնել) իր տրամադրած անձնական տվյալները կամ դրանց մի մասը, ինչպես նաև դրանց գաղտնիության ցուցանիշները՝ օգտագործելով անձնական տեղեկությունների մատչելիության խմբագրման և կարգավորման ֆունկցիան, ինչպես նաև պահանջել Ընկերությունից իր անձնական էջի ամբողջական վերացում և բոլոր անձնական տվյալների հեռացում Կայքէջի անձնական տվյալների բազաներից:

9. ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 9.1. Կայքէջի անվանումը հանդիսանում է ապրանքային նշան և պաշտպանվում է ՀՀ և միջազգային օրենսդրությամբ:
- 9.2. Ընկերությունն արգելում է Կայքէջի պատկերանշանի օգտագործումը երրորդ անձանց կողմից առանց գրավոր լիցենզիայի պայմանագրի: Առանց Ընկերության գրավոր համաձայնության արգելված է Կայքէջի պատկերանշանի օգտագործումը ցանկացած գովազդային նյութերում, թուղթիկներում կամ այլ կայքերում:
- 9.3. Կայքէջի միջոցով Ընկերությանը տրամադրված բոլոր տեղեկությունները համարվում է Ընկերության սեփականությունը, բացառությամբ՝ ապրանքային նշանի, անվանման և պատկերանշանի (լոգոյի), որոնք ՀՀ և միջազգային օրենսդրության համաձայն պատկանում են Օգտատիրոջը և երրորդ անձանց:
- 9.4. Կայքէջի նկատմամբ բոլոր բացառիկ հեղինակային ու այլ գույքային իրավունքները պատկանում են Ընկերությանը, և Կայքէջի օգտագործումը Օգտատիրոջ կողմից հնարավոր է բացառապես ՀՀ իրավական ակտերի, Պայմանագրի, Կանոնների և Պայմանների շրջանակներում:
- 9.5. Կայքէջում զետեղված ամբողջ տեղեկատվությունը չի կարող վերարտադրվել կամ օգտագործվել առանց Ընկերության գրավոր համաձայնության:
- 9.6. Կայքէջը, հանդիսանալով Ընկերության հեղինակային իրավունքի օբյեկտ, միևնույն ժամանակ ներառում է գովազդային և այլ բնույթի տեղեկություններ, որոնք տրամադրվել են առանձին Օգտատերերի կողմից տեքստերի, գրաֆիկական պատկերների, ապրանքային և սպասարկման նշանների տեսքով՝ Կայքէջում տեղադրելու համար: Ընկերությունը հրատարակում է տվյալ նյութերը Կայքէջի տեխնիկական պահանջներին համապատասխան:
- 9.7. Միևնույն ժամանակ, Օգտատերը երաշխավորում և պատասխանատվություն է կրում հեղինակային իրավունքի պահպանման համար, Կայքէջում իր տրամադրած տեղեկությունների տեղադրման համար, և հատուցում է Ընկերության կրած բոլոր վնասները, որոնք վերջինս կրել է երրորդ անձանց մասնակցությամբ պահանջների և վեճերի կարգավորման ժամանակ, որոնք առաջացել են Օգտատերերի կողմից մտավոր սեփականության իրավունքների խախտման հետևանքով:

10. ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- 10.1. Առևտրային գաղտնիք (այսուհետ՝ Չբացահայտված տեղեկատվություն) է համարվում, անկախ ձևից, տեղեկատվությունը տրամադրող կողմին և նրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեխնիկական, ֆինանսական, կազմակերպչական, առևտրային և այլ տեղեկատվություն, որը անհայտ է երրորդ անձանց և երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն, և կողմը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:
- 10.2. Չբացահայտված տեղեկատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալ տեղեկատվությամբ՝ բանաձևեր, ալգորիթմներ, մեթոդներ, սարքավորումներ, մոդելներ/նմուշներ, գործընթացներ, հավաքված տվյալներ, հաճախորդներին վերաբերող տվյալներ, ֆայլեր, ծրագրային ապահովումներ, համակարգչային ծրագրեր, բիզնեսի տեխնիկաներ, արտադրության գաղտնիքներ, նոու-հաուսներ, հաճախորդների անուններ, ներկա, պլանավորված կամ առաջարկվող ապրանքներ, մարքեթինգի և բիզնես պլաններ, բիզնես և մարքեթինգ մեթոդներ, կանխատեսումներ, նախագծեր և վերլուծություններ, ֆինանսական տեղեկատվություն ու գներ, ընթացակարգեր, ապրանքներ, ծառայություններ, հայտնագործությունների, գյուտերի, արդյունաբերական նմուշի, այլ արտոնագրման ենթակա ստեղծագործությունների, հեղինակային իրավունքների օբյեկտների, հետազոտությունների և փորձնական աշխատանքի վերաբերյալ տեղեկություններ, գներ, որով տեղեկատվությունը տրամադրող կողմը ծառայություններ է մատուցում կամ ապրանք է վաճառում և այլ տեղեկատվություն՝ գրավոր կամ այլ կերպ, որը վերաբերում է տեղեկատվությունը տրամադրող կողմի գործունեությանը, նրա գործունեության կարգին, պլաններին, գործընթացներին, ապրանքներին, աշխատողներին, ինչպես նաև տեղեկատվություն, որն ունի կոնֆիդենցիալ բնույթ և հնարավորություն ունի ազդելու տեղեկատվությունը տրամադրող կողմի զարգացման և արդյունավետ գործունեության վրա և, որը հնարավորություն է տալիս տեղեկատվությունը տրամադրող կողմին արդյունավետորեն մրցակցել իր գործունեության ոլորտում:

- 10.3. Օգտատերերը Կայքէջի միջոցով միմյանց տրամադրում են Չբացահայտված տեղեկատվություն, և պարտավորվում են երրորդ անձանց համար չբացահայտել կամ նրանց այլ կերպ չտրամադրել Կայքէջի միջոցով իրենց փոխանցված Չբացահայտված տեղեկատվությունը:
- 10.4. Կայքէջի միջոցով տրամադրվող Չբացահայտված տեղեկատվությունը հանդիսանում է տրամադրող կողմի սեփականությունը, և այդ տեղեկատվության նկատմամբ որևիցե իրավունք կամ լիցենզիա ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի փոխանցվում ստացողին:
- 10.5. Չբացահայտված տեղեկատվությունը ստացող կողմը պարտավորվում է չընդօրինակել, չպատճենահանել կամ չօգտագործել իրեն տրամադրված Չբացահայտված տեղեկատվությունը:
- 10.6. Չբացահայտված տեղեկատվությունը ստացող կողմը պարտավորվում է գաղտնի պահել տրամադրված Չբացահայտված տեղեկատվությունը և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը այն պահպանելու համար:
- 10.7. Չբացահայտված տեղեկատվությունը ստացող կողմը պարտավորվում է առանց այդ տեղեկատվությունը տրամադրող կողմի նախնական գրավոր համաձայնության երրորդ անձանց համար չբացահայտել կամ նրանց այլ կերպ չտրամադրել Չբացահայտված տեղեկատվությունը, բացառությամբ՝ Պայմանագրով, Կանոններով, Պայմաններով, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերի:
- 10.8. Եթե Չբացահայտված տեղեկատվությունը ստացող կողմը պարտավոր է պետական մարմիններին, դատական մարմիններին կամ իր կանոնադրությամբ սահմանված մարմիններին նրանց պահանջով տրամադրել Չբացահայտված տեղեկատվությունը, ապա նա պարտավոր է այդ մասին տեղյակ պահել Չբացահայտված տեղեկատվությունը տրամադրող կողմին և վերջինիս պահանջով ու հաշվին ողջամիտ ջանքեր գործադրել Չբացահայտված տեղեկատվության տրամադրումը սահմանափակելու համար:

11. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- 11.1. Օգտատերը պարտավոր է՝
 - 11.1.1. չխախտել ՀՀ իրավական ակտերի, Պայմանագրի, Կանոնների, Պայմանների դրույթները և Ընկերության ու երրորդ անձանց իրավունքները,
 - 11.1.2. չօգտվել Կայքէջից, եթե դեռ չի լրացել նրա 16 (տասնվեց) տարին, կամ ժամանակավոր կամ անժամկետ կասեցվել է Կայքէջից օգտվելու նրա իրավունքը,
 - 11.1.3. տեղեկատվությունը տեղադրել Կայքէջի ճիշտ բաժիններում ու վայրերում և Ընկերությանը չներկայացնել որևէ պահանջ Համակարգում ներկայացվող տեղեկատվության անարժանահավատության վերաբերյալ,
 - 11.1.4. չկատարել ապօրինի գործողություններ, որոնց ներքո ենթադրվում են խարդախության և դրամաշորթության տարբեր մեթոդներ,
 - 11.1.5. առանց Ընկերության գրավոր համաձայնության չկատարել այնպիսի գործողություններ, որոնց նպատակն է աջակցել այլ համացանցային-ռեսուրսների առաջխաղացմանը, չփոխանցել այլ անձանց Կայքէջի գրանցման մանրամասները, նույնականացման համարը և գաղտնաբառը,
 - 11.1.6. չպատճենել, չվերարտադրել, չձևափոխել Կայքէջը, Կայքէջի ծառայությունները, հավելվածները և այլ գործիքները, չստեղծել ածանցյալ ստեղծագործություններ,
 - 11.1.7. չհավաքագրել Ընկերության կամ այլ անձանց անձնական տվյալներ և վերջիններիս պատկանող նյութեր առանց նրանց համաձայնության,
 - 11.1.8. չտեղադրել կեղծ, մոլորեցնող, անարժանահավատ, ապակողմնորոշիչ, գրպարտող, իմաստ չունեցող, վիրավորանք, սպառնալիք, անպարկեշտ բովանդակություն պարունակող, քաղաքական ենթատեքստ ունեցող, Ընկերության և (կամ) երրորդ անձանց պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը վարկաբեկող, պատերազմ, բռնություն, անբարոյականություն քարոզող, ինչպես նաև ՀՀ իրավական ակտերով և Պայմաններով արգելված կամ անցանկալի տեղեկություններ Կայքէջում,
 - 11.1.9. չհրապարակել Կայքէջում Ընկերության և երրորդ անձանց վերաբերյալ տեղեկատվություն առանց Ընկերության կամ համապատասխան երրորդ անձանց թույլտվության,
 - 11.1.10. չտարածել (ուղղարկել), չփոխանցել հաղորդագրություններ կամ նյութեր Կայքէջում, որոնք խախտում կամ ոտնահարում են Ընկերության և երրորդ անձանց հրապարակային օգտագործման, մտավոր սեփականության կամ այլ գույքային և ոչ գույքային իրավունքները,
 - 11.1.11. չխախտել մտավոր սեփականության իրավունքներ, չպատճենել, չփոփոխել, չհեռացնել կամ չտարածել Կայքէջում ներառված որևէ հեղինակային իրավունքի օբյեկտ, ապրանքային կամ այլ նույնականացնող նշան կամ չստեղծել որևէ ածանցյալ աշխատանք դրանց հիման վրա,
 - 11.1.12. չըջանցել այն մեխանիզմները, որոնք նախատեսված են Կայքէջի անվտանգության ապահովման համար կամ սահմանափակում են Կայքէջ մուտք գործելը,
 - 11.1.13. չտեղադրել, չտարածել (ուղղարկել) կամ չփոխանցել ծրագրային ապահովման միջուկներ կամ սպամ, վնասակար ծրագրային ապահովում/ծրագրեր կամ այլ նյութեր ու կազմաքանդող տարրեր, որոնք կարող են խաթարել Համակարգը և Կայքէջից օգտվողների համակարգիչների գործընթացը,
 - 11.1.14. չմիջամտել Կայքէջի գործունեությանը և ձեռնպահ մնալ այնպիսի գործողությունների կատարումից, որոնց նպատակն է Կայքէջում եղած ծրագրային կոդերի փոփոխումը կամ ծրագրի ապակոդավորումը և վերափոխումը, ծրագրային համակարգ չթույլատրված մուտք գործելը, որևէ եղանակով Կայքէջի էլեկտրոնային ֆայլերին տիրանալը կամ վնասելը,
 - 11.1.15. չօգտագործել ռոբոտներ, որոնողական սարք (“spider”) կամ այլ ավտոմատացված միջոցներ, սարքեր կամ ծրագրեր Կայքէջ մուտք գործելու կամ այլ նպատակներով:

11.2. Ընկերությունը պարտավոր է՝

11.2.1. ապահովել Օգտատիրոջ մուտքը Համակարգ,

11.2.2. ապահովել Համակարգ մուտք գործելու համար տեղեկության գաղտնիությունը (մուտքանունը և գաղտնաբառը),

11.2.3. չխոչընդոտել Օգտատիրոջ կողմից իր վերաբերյալ Համակարգում տեղեկություններ տեղադրելու հարցում:

12. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

12.1. Ընկերությունը պատասխանատվություն է կրում ՀՀ իրավական ակտերով, Պայմանագրով, Կանոններով և Պայմաններով սահմանված իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

12.2. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում՝

12.2.1. Կայքէջի խափանման կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

12.2.2. Մասնակիցների թվից Գործընկերոջ համար ներգրավված հաճախորդների քանակի և արդյունքի համար,

12.2.3. Կայքէջում Օգտատիրոջ կողմից ներկայացված տվյալների և տեղեկությունների արժանահավատ, ճգրիտ ու թարմացված չլինելու և դրանց անճշտությունների համար,

12.2.4. Կայքէջում հրապարակված տեղեկատվությունից օգտվելու արդյունքում ձեռք բերված ապրանքների կամ ծառայությունների որակի, անվտանգության, օրինականության, համընդհանուր ընդունված չափանիշներին և Օգտատիրոջ ակնկալիքներին անհամապատասխանության համար,

12.2.5. Կայքէջում տեղադրված տեղեկատվության հետևանքով Օգտատիրոջ կրած նյութական, բարոյական և գործարար համբավի ուղղակի կամ անուղղակի վնասների համար,

12.2.6. Կայքէջում ներկայացված այլ կայքերի կամ հղումների բովանդակության (ներառյալ՝ դրանց ստույգ, օրինական, պատշաճ լինելու) և հեղինակային իրավունքների պաշտպանության համար,

12.2.7. Կայքէջի օգտագործման անհնարիտության, տվյալների կորստի և օգտագործումը դադարեցնելու համար,

12.2.8. Կայքէջի բարելավման, ինչպես նաև նրանում պահպանվող տեղեկությունները թարմացնելու անհնարիտության համար,

12.2.9. երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով Օգտատիրոջ սարքերին կամ ծրագրերին պատճառված որևէ վնասի համար, որոնք ծագել են Կայքէջից օգտվելու հետևանքով,

12.2.10. Կայքէջում որևէ անօրինական, սպառնալից, վիրավորական, զրպարտիչ, կեղծ, անպարկեշտ տեղեկությունների կամ նյութերի համար,

12.2.11. Կայքէջի շահագործման ընթացքում սխալների, անսարքությունների, ծրագրային վիրուսների և այլ վտանգավոր տարրերի բացակայությունը չապահովելու համար:

12.3. Օգտատերը պատասխանատվություն է կրում՝

12.3.1. ՀՀ իրավական ակտերով, Պայմանագրով, Կանոններով և Պայմաններով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

12.3.2. տեխնոլոգիական գործընթացների իրականացման, վերահսկման և կորցված տվյալների վերականգման նպատակով միջոցների ժամանակին թարմացումը և պահպանումը չապահովելու համար,

12.3.3. իր կողմից հրապարակված տեղեկատվության, այդ թվում՝ իր կողմից հղում կատարված այլ համացանցային կայքերում պարունակվող կեղծ, մոլորեցնող, անարժանահավատ և ապակողմնորոշիչ լինելու արդյունքում երրորդ անձանց պատճառված վնասների համար,

12.3.4. Համակարգին անդամակցությունը դադարեցնելու դեպքում մյուս Օգտատերերի շահերը երաշխավորող գործողություններ չիրականացնելու, այդ թվում՝ Համակարգին անդամակցությունը դադարեցնելու մասին չտեղեկացնելու և իր գործունեության վայրից Համակարգին անդամակցելու մասին տեղեկատվություն չհեռացնելու համար:

12.4. Օգտատերը պատասխանատվություն չի կրում Կայքէջի խափանման կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: